ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 փետրվարի 2017 թվականի N 31-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ՋՐՀԵՂԵՂՆԵՐԻ, ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ, ՍԵԼԱՎՆԵՐԻ, ՔԱՐԱԹԱՓՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՍՈՂԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> և <<դ>> կետերի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի N ՆՀ-728 հրամանագրի 1.22-րդ կետի՝ Կոտայքի մարզի տարածքում 2017 թվականի ընթացքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների, քարաթափումների և սողանքների կանխարգելման, հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների կազմակերպման նպատակով *որոշում եմ՝*

1. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի տարածքում 2017 թվականի ընթացքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների, քարաթափումների և սողանքների կանխարգելման, հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների պլանը՝ համաձայն N 1 հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի համայնքների ղեկավարներին՝ մինչև 2017 թվականի մարտի 18-ը ներառյալ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչություն ներկայացնել

1) համապատասխան միջոցառումների պլան,

2) տեղեկություններ համայնքի հակահեղեղային կառույցների հաշվառման վերաբերյալ՝ համաձայն N 2 հավելվածի,

3) առաջարկություններ՝ համայնքին սպառնացող պոտենցիալ վտանգավոր տեղամասերի և բնակչության անվտանգության ապահովման ուղղությամբ նախատեսվող միջոցառումների վերաբերյալ՝ համաձայն N 3 հավելվածի:

3. Հանձնարարել՝

Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչության պետին՝

1) ուսումնասիրել համայնքների ղեկավարների կողմից ներկայացված միջոցառումների պլաններն ու տեղեկատվությունները և մինչև 2017 թվականի մարտի 25-ը ներառյալ ներկայացնել տեղեկատվություն՝

<<Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի տարածքում 2017 թվականի ընթացքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների, քարաթափումների և սողանքների կանխարգելման, հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների պլանով>> նախատեսված միջոցառումների կատարման ընթացքի մասին:

2) Արտակարգ իրավիճակներում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի բնակչության պաշտպանության պլանները բերել պատրաստական վիճակի և անհրաժեշտության դեպքում պլաններով նախատեսված միջոցառումները դնել գործողության մեջ:

4. Որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի տեղակալ Հ.Հայրապետյանի վրա:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ

2017 թվականի փետրվարի 27
ք. Հրազդան